

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 փր.
սարեկակ 7	"
վեցամսայ Արսասահմանի	15 փր.
համար սարեկակ 8	"
վեցամսայ Ալեքիկայի համար	3 փր.
սարեկակ 1.50	"

Ծանուցումն տողը սուսըին երեսին համար 40 սանթրիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթրիմ է, երեսին ակնի անգամներու համար 20 0/0 զեղջ կըլայ:

Վառեցայի համար ձեռքի 40 սանթրիմ է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇՄԱՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ БАНАРЯТЪ

համակ եւ զրամ ու կիլ խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի

15 ՍԱՆԹՐԻՄ

Արսասահմանի համար ձեռքի

20 ՍԱՆԹՐԻՄ

Գրութիւնք եւ չեկ տրուի

ՇՈՐԵՔՇՄԱՐԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԿԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

ԱՆԿՈՒՄԸ ԿՍԱՐԵԱԼ Է

Որէկ հետեւեալ նամակը ընդունեցի Փրանսայի մի քաղաքից:

«Սիրելի Վարդօ,

«Կարճ ժամանակով եկած եմ այստեղ. Կովկաս եղածս ժամանակ քո մասին շատ բացասական բաներ էին տարածում. այսօր բաղդի բերմամբ ձեռքս ընկաւ քո «Վերջապէս» Ա. և Բ. առաջնորդողները. որպէս անձնական շարեւածներ, ցանկալի կը լինէր որ միջկարճ երկտողով գըրէիք ինձ թէ ինչու՞ն է բանը. Բացի այդ լաւ կը լինի որ քեզ արդարացնող թիւերից 10ական օրինակ ուղարկես ինձ այն շրջանների համար ուր բացարձակ քեզ ճանաչել են տւել որպէս մի խաչագողի...»

Բարեւներ քեզ, Տիկնո՛ւր և ձագուկներդ

Այս նամակը պարզօրէն մերկացնում է Դաշակցութեան մէջ գտնված իմ հակաակորդների ստորնութիւնը. ցոյց է տալիս որ այդ հակաակորդները չեն բանցից աւելի ստորին գործիքները ձեռք ձեռքի տուած ամեն միջոց գործ են զնում նսեմացնելու այն սրբազան պայքարի ազդեցութիւնը որ ես հրապարակով և բացարձակօրէն սկիզբը դրի դեռ Կ. Կովկասի մէջ անդամ եղած միջոցին, որին մի ամիս առաջ արդէն ջերմ փափագ էի յայտնել թէ դրամ և թէ ամեն բան յանձնել միւս ընկերներին և հեռանալ այն ճահ. ճից օրի մէջ տարիներով խեղդվում էի, միշտ սին յոյսը ունենալով թէ այդ ճահիճը պէտք է խաղաղօրէն մաքրվի...»

Խաչագողներ, որոնք ձեռքից փրկեցի յեղափոխութեան պատկանող վեց հազար Փրանկ, լըրբութիւնը ունեն ինձ խաչագող հռչակելու ճգնել...»

Խաչագողներ, որոնք սասնեակ տարիներով առանց ու ե է

թէ հանրային և թէ անձնական արգիւնաւէտ աշխատութիւն ու նենալու ապրել են խեղճ հայ ժողովրդի արեան գնով, եղել են պարագիտ կամ հանրութեան կամ մասնաւոր անհատների, յանդընում են ինձ խաչագող ներկայացնելու, որովհետեւ ես պայքար եմ սկսել Դաշակցութեան մէջ տիրող այն սխտէմիտ գէմ, որը մի կողմից հայ ցեղից խլում է անթիւ անհամար թանկագին կեանքեր, միւս կողմից յարատեւել տալիս յեղափոխական դիմակի տակ թագնված վախկոտ, խաբբայ, քծնող, իւր ք ստրուկ պարապիտներին:

Սպառնալիքներ, ուլտիմատումներ, զրպարտութիւններ տեղացնում է հայ ցեղի մորթիների փալանգան իմ հասցէին. որովհետեւ ես յանդգնել եմ չը պատել այն ինչ որ կուռք լինելու արժանի չէր, յանդգնել եմ սիրող յեղափոխականին իր անունով կոչել, ապակեգրոնացման քողի տակ ստորին ձգտումներով անարժան մարդկանց կենտրոնացումը մատնանշել, չեղած մարմինների գոյութեանը չը հաւատալ. ոչ մի իշխանութիւն չունեցող Բիւրօների իշխանութիւնը չը ճանաչել, և դէպի նրանց վերաբերվել այնպէս, ինչի որ արժանի են:

Մինչդեռ յեղափոխութեան մէջ խաչագողը նա է, ով յեղափոխական անուն է կրում և իր կեանքը ոչ մի վտանգի չէ ենթարկում. Յեղափոխութեան մէջ խաչագողը նա է որ երկրին վերաբերեալ գրամըզգրպան է դնում ազատ երկիր է փախչում. Յեղափոխութեան մէջ խաչագողը նա է որ համաձայնում է արտասահմանում ապրել, երբ իր շահին այդպէս յարմար է և յեղափոխութեան կասսայից հազարներ է ծախսում:

Յեղափոխութեան մէջ խաչագողը նա է որ կովկասում յեղափոխական գործերից փախչում է, իսկ արտասահմանում թունդ յեղափոխական է ներկայանում:

Յեղափոխութեան մէջ խաչագողը նա է որ երկրի սպանութիւնների շնորհիւ եւրոպական բանկա եկած գրամը վախենում է գանձել. բայց իրեն թոյլ է տալիս յեղափոխական վարիչ ճանաչել տալ ինքզինքը:

Խաչագողը նա է որ անմշակ, խոպան մարդկանց երկիր է քրջում կատաստրօֆներ ստեղծելու իսկ ինքը եւրոպայում կամ կովկասում է ապրում:

Ահա ովքեր են խաչագողները, և գրանք ու գրանց պէս պէս մանկալաւիկները խոպան և անմըշակ հողիները կամ գիտակից պարագիտները ընկան է որ պիտի ծառանան իմ դէմ. որովհետեւ ես թոյլ եմ աւելի ինձ այլեւս բացարձակօրէն բռնալու, ի լուր հայ աշխարհի, — Ի աւել ինչ որ շահագործեցիք հայի քրտինքը, արիւնը հերոսների գիակները, անունները, Ի աւել ինչ ինչ որ մնացիք այն գիրքերում որ ձեզ յարմար չէ, վայել չէ. կամ կորսվեցէք, հեռացեք այդ տեղերից կամ թէ գնացեք երկիր, արհաւիրքների մէջ, կանգնեցեք տանջվող, մարտիրոսվող ժողովրդի կողքին. այն տեղ եղէք զեկավար, կուլէք եղէք հայ սուլթաններ, խաներ, միայն կուռքեցէք, կաշիներդ վտանգի տակ դրէք, են թարկվեցէք այն վտանգներից դէպի ուր այնպէս սիրով քրջում էք խոպան ու անմըշակ մարդկանց:

ՎԱՐԴՈ

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԾՈՒՇՈՒՄ

(ԹԻՖԼԻՉԻ «ՍՐՇԱԼՈՅՍ» ԹԵՐԹԻԾ)

(Շար. Ասխուրդ քիւիկ և Վերջ)

Փոխ նահանգապետ Բարանովսկին գաւառապետի միջոցով յայտնում է առաջնորդին, սոր ինքը այլեւս անկարող է զսպել թուրքերին. եւ թող հայերը իրենք մտածեն իրենց պաշտ-

պանութեան մասին, Միայն աւելացնում է փոխ նահանգապետը, թուրքերը զիջանելով իմ խնդրին, վճռել են ձեռք չտալ կոնսիստորիային, եթէ այդտեղից հրացանաձգութիւն չլինի:

Այդ բոլորից յետոյ իհարկէ աւելորդ է մտածել հաշտութեան մասին. Աղայեղի հայրենակիցները վճռել էին յամառ կերպով յոռաջ մղել իրենց գաղանթիւնը Այրբլով դարբասը, իսլամական խուժանք ներս էր մտել Ագուլեաց եկեղեցին. Բարձրաշարով եկեղեցու զանգակատունը, թուրքերը ալ ու ձախ գնդակահարում էին հայկական թաղերը և սպանում էին ներս խուժել:

Հասկանալի է, որ այս վիճակի մէջ հայ ժողովուրդը պէտք է ամեն ճիգ թափէր փրկելու իր պատիւը, եւ ահա քաղաքի հայ երիտասարդները վճռում են վերջին հարուածը հասցնելու ֆանատիկոս ամբոխին. Նըրանք շրջապատում են եկեղեցին և սկսում են զանգակաաան վրայից կոռուղ թուրքերի դէմ յամառ հրացանաձգութիւն. Սկզբում թուրքերից սպանում է նրանց յայտնի աւազակներից մէկը. բայց ահա զորքում է և ուռւմը. ահ ու սարսափի տակ կենդանի մնացած թուրքերը, շարակելով ընկերների դիակները, ուզում են փախչել, բայց եկեղեցու տակի անկիւններից վզվզում են հայկական զնդակները և մի-մի վայր են գլորում թուրքերից շատ շատերը. ներս ենք մտնում. սոսկալի տեսարան. եկեղեցու բակում թափուած էին բազմաթիւ նաւթոս ցնցոտիներ. եկեղեցու մէջ ընկած են կոտորած ջահերը և եկեղեցական պատկերները. Ամբողջ եկեղեցու յատակը ծածկուած է գարու հատիկներով. Անկիւնում թափված են անկարգ կարտի թըղթեր և զեւտրեան շիշեր. Պատուած, այս ու այն կողմն են նետուած եկեղեցական գրքերը. կոտորուած են պահարանները. պատի վրայ ուսերէն տառերով հայկոյում են քրիստոնեաներին. Վայելչութեան սահմաններից դուրս չգալու համար մենք չենք յիշում մի քանի տեսարանների մասին, որոնք գրւած են և իշխանութեան քննիչի արձանագրութեան մէջ:

Թուրքերը յիտ են մղում և Բաշուց թաղում թողնելով բազմաթիւ զոհեր. Բայց այս բոլորը դեռ չէին կարող բաւական համարուել. Հրապարակ է գալիս և հայ արհեստաւորի ընտանի իմաստութիւնը. Սրանց մէկի ծրագրով մի փրկարար պայթուցիկ է նետում Գոհար-աղայի տան վրայ, որ կուռող թուրքերի ամենաուժեղ զիւրքն էր համարւում. Պայթուցիկի

Գրքագիրք թողնում փախում են շատերը. բայց այդ ժամին գործում է և Նահատակի դիրքի հայ տղաների զարկը: Թփուկների յետևը սփռում են բազմաթիւ թուրք դիակներ: Թուրքական թաղում բարձրանում է խաղաղութեան սպիտակ գրողակը: Փոխ-նահանգապետը դուրս է գալիս խաղաղութեան և հաշտութեան մուգիկայով մտնում են թաղը: Հայ և թուրք հոգեւորականները երկու կողմի հասարակութեան հետ շրջում են քաղաքի զանազան մասերը:

Այդպիսով դադարում է հայ-թուրքական պատերազմը Շուշի քաղաքում:

Տեղի է ունենում հաշտութիւնը. բայց միթէ այժմեան գրութիւնը թոյլ է տալիս ասելու. որ հաշտութիւնը խաղաղութիւն հաստատեց, Երբէք:

ԹԵԼՈՒՐ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎՍՈՒՆԱՅԻ ՄԵՋ

(Շար. նախորդ քիւիսն ևս վերջ)

Այսպէս պէտք է վարուի ոչ միայն ուսուցչին հանդէպ, այլ բոլոր ազգային պաշտօնէիք նկատմամբ. նոյնիսկ հոգաբարձուին և թաղականին համար ալ:

Հանրային գործերու անաջողութիւնը՝ անհատներու բացասական յատկութիւններով բացատրելու եղանակը կարելի է պարզել ասով թէ՛ մեր բոլոր ազգային գործերը բաղադրված կան է այն ձեռքերու մէջ, որոնց կը պակսի ամենատարրական նախապատրաստութիւն մը գործերուն ըմբռնման մէջ: Ձր կրնալով ըմբռնել մեր կրթական գործի պակասութիւններու էական և արմատական պատճառները ու պայմանները, մեր հոգաբարձուները, թաղականները անկարող կըլլան նաեւ

ձեռնարկելու աւելի արմատական միջոցներու, յաճախ վերագրելով անաջողութիւնները անձնաւորութեանց անկարողութեան և կամ այնինչի:

Վերջին պարագան անշուշտ իր կարգին կրնայ ազդել որոշ չափով գործի մը յաջող կամ անաջող ելքին, բայց միմիայն որոշ չափով և ոչ ամբողջապէս:

Կրթական գործը իր բնուէն լայն և բարդ հասարակական գործունէութիւն մը կախում ունի մինչև մեծ աստիճան ամբողջ հասարակութեան զարգացումէն, անոր հասկացողութիւնէն, բարձրէն սովորութիւններէն, նիստուկացէն՝ մէկ խօսքով անոր հաւաքական միտքէն և կամքէն:

Երբ կրթական գործը կըմբռնուի այս կերպով, այն ատեն ինքնին պարզ և բացայայտ է թէ՛ այս կամ այն ուսուցիչը, հոգաբարձուն, թաղականը ներկայ վիճակին միակ պատասխանատուն չեն, այլ բոլոր անոնք, որ ունին նոյն հասկացողութիւնը և նոյնչափ կամք գործելու համար:

Եւ իսկապէս եթէ մեր վարժարանները այսօր չունին նախաձեռն վիճակ մը՝ պատճառն այն է որ կամ մենք տարբեր կերպով չենք կարող ըմբռնել և կազմակերպել մեր գրգռողական գործը և կամ ի՞նչ աւելի լաւ հասկացողներուն ալ գործելու կամքը, կորովը, եռանդը կը պակսի: Այս ենթադրութեանց որոշ հետ պիտի համաձայնիք, ինչքի չէ:

Եթէ հարկ է համեստ կարծիք մը յայտնել այս մասին, պատրաստ եմ ամեն կերպով փաստելու, որ գործելու կամքի պակասութեան հետ մեզի կը պակսի նաեւ տարբեր հասկացողութիւն մը, ինչպէս աւելի բարձր, աւելի մշակուած:

Մեր մէջ ո՞վ պիտի ըլլար դպրոցական գործերով ամենէն շատ հետաքրքրուողը, հասկցողը և գործողը, եթէ ոչ ազգային ուսուցիչը, որ պէտք էր միայն առջեւէն քալել, ուղեցոյց ըլլար թէ իր հասկացողու-

թեամբ և թէ իր գործելու պատրաստակամութեամբ: Պուկարահայ ուսուցչութիւնը կազմուած այնքան տարբեր տարրերէ, տարբեր հասկացողութեամբ, տարբեր կրթութեամբ որչափ են և թուով՝ իր մինչև ցարդ ունեցած գործունէութեամբ ներթական ապացոյց կուտան մեր վերոյիշեալ ենթադրութեանց նկատմամբ յայտնած միտքին:

Այս գլխաւոր նասարակական թերութեանց աւելցուցէք նաեւ մեր հասարակական, չըսելու համար ցեղային, աղտը՝ խնամիտութիւնը, ազգականութիւնը, բարեկամութիւնը, ինչպէս մեր դպրոցական վարչական գործող մէջ, նոյնպէս և ազգային բոլոր միւս գործերու վարչական կարգադրութեանց մէջ, այն ատեն ձեզի ալ աւելի հասկնալի կըլլան մեր կրթական գործի պայմանները:

Խնամիտութիւնը դուք պիտի գտնէք նաեւ մեր յեղափոխական կուսակցութեանց մէջ՝ հակառակ վերջիններուն ամենապատկան(ը) ծրարներուն և ըմբռնումներուն: Խնամիտութիւնը լայն արմատներ թողած է բոլոր կուսակցութեանց մէջ անխտիր և այսօր ի փառս և ի պատիւ Դաշնակցութեան անոր ամենահաւատարիմ և ամենագործօն-կարեւոր անդամներէն մի՛ Պ. Վարդուկեանը կը մէջ յիշեալ խնամիտութեան դէմ՝ առանց նայելու և շարժելու այն զգուցելի նկատումներէն՝ թէ ի՞նչ պիտի ըսեն իրեն աղա ընկերները և բարեկամները: Եւ կարծես Դաշնակցութիւնը կը ներկայանայ մեզ քանի մը անհատներու Դաշնակցութիւն ով դիտէ ի՞նչ զգուցելի անհասական նպատակներով:

Դեռ երեսուցորդուց քիչ-շատ ազատ երկիր մը, կառավարական տեսակետով կազմակերպուած քիչ շատ աւելի լաւ՝ Տաճկաստանէն մեզի չը սորվեցուց ևս մեկէ չը վաճեց այն հասարակական աղտը զոր անտարակոյս ծառայեցինք մեր նախահայրերէն և տաճկական մանկուսութեան ֆէնտիական ըմբռնումէն:

Հասարակական շահերը, կամ աւելի

ի լայն առումով, ազգի մը շահերը գնել աւելի վեր սեր անհատական, բարեկամական և կամ ազգականական նկատումներէն՝ ասիկա մենք այնքան հեռու է, որչափ երկրիք երկրէն:

Մեր յեղափոխական կուսակցութեանց ներքին կեանքի պատմութիւնը, մեր հոգաբարձութիւններու ու թաղականներու դիւանները ամենազօրաւոր, մինչև ասպիցներու աստիճան ապացոյց են ասոր:

Մեր մէջ խնամիտութիւնը աւելի զօրաւոր և ազդեցիկ է քան հասարակական կարծիքը, նոյնիսկ երբ վերջինը առնէ ամենալայն ծաւալ մը և զստանայ ու վերածուի հասարակական զգոհութեան մը:

Արդ երբ ի նկատի առնէք մեր յիշած զլլատարագոյն թերութիւնները և մի քիչ վեր նկարագրուած ազգը, դուք ի՞նչ իրաւունքով պիտի պահանջէք ուսուցիչէ մը, անհատէ մը՝ այս թերութեանց դէմ կուուելու ամենամեծ պատրաստակամութեամբ հանդերձ՝ ձեզի տայ ներկայի մէջ այդպիսի մը, շատ տարբեր անցեալէն:

Հակառակ պարագային դուք պահանջած կըլլաք անհատէ մը յեղաշրջում բերէ, յեղափոխէ ներկայ վիճակը, ինչ որ երկնքի տակ, այս սխալական աշխարհի վրայ ո և է անձնաւորութիւն մը չէ ըրած մինչև ցարդ:

Եւ հաւասար հասկացողութեան և մաքառելու, կուուելու հաւասար կամք ունեցող անձինք միանան և կազմակերպուելին, այն ատեն միայն կարելի է ստեղծել ոյժ մը, որ իր նպատակայարմար, բնականաբար և որոշ ու անընդհատ գործունէութեամբ կործանէ յիշեալ թերութիւնները և անոնց աւերակներուն վրայ ստեղծէ նոր հասկացողութիւն, նոր եռանդ և շահերու տարբեր ըմբռնում մը, պաշտպանութիւն, այն է՝ ազգային, հանրային շահը, օգուտը միշտ աւելի վեր պահել, քան անհատական ո և է նկատում մը. այս պէտք է ը-

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԵՑԳ

Դ Է Ֆ Ի

Հայկական Ռոման մը

(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ Ը.

«ՎԵՐՋԱԼՈ՞ՅՍ Է»

—Օ, տարակոյս չկայ որ այս և ասոր նման շատ մը քարայրներ, որոնք այլ և այլ լեռներու մէջ տարածուած են, Հռովմէական կայսրութեան հալածանքներուն միջոցին բացուած՝ նախնի քրիստոնեաներու գործերն են, ինչպէս որ Հռովմայ քրիստոնեաներն ալ գետնազամբաններ կը փորէին իրենց մեռելները հոն հանգչեցնելու համար, մինչև Տիրոջ գալուստը:

Աչքերս ինցուեցան արցունքով և մէկ կողմ դարձայ զանոնք ծածկելու համար:

—Այո՛, Դէֆիս, շարունակեց Սիւլէյման համակրական շեշտով մը, զըմնդակ ու ողբալի աշխարհ մ'էր՝ այն ժամանակ. դժնդակ ու ողբալի աշ-

խարհ մ'է՛ հի մա, Սէրն է միայն անոր մորմոքիչը: Միմիայն, Դէֆիս, մենք հաւատարիմ մնանք իրարու:

Երրորդ անգամն էր որ Սիւլէյման այս խօսքերը կուղղէր ինձ, ու այս խիստ վշտացուց զիս: Արդեօք կը տարակուսէր վրաս: Բայց և այնպէս, իրեն հանդէպ տածած չափազանց սէրս թոյլ չէր տար որ բարկանայի, ուստի պարզութեամբ ըսի.—«Դէֆին հաւատարիմ պիտի մնայ իր Սիւլէյմանին թէ՛ կենդանութեան միջոցին, թէ՛ մահուան մէջ... և թէ՛...»:

Բայց ան զիս ըսողներուն մէջ անոնցով համոզողներով փակեց բերանս.—«Հոգեա՛կս, մըմիջեց, թո՛ղ Աստուած պահէ ու պաշտպանէ քեզ»: Այս մեր բաժանումն էր: Ապա, փոքր ինչ աճապարանքով՝ թողուց քարայրը:

Դրեթէ քսան րոպէ վերջ հայր իր սովորական բարեւոյժներս մտաւ և յայտնեց թէ մեկնումի՛ն համար ամեն բան պատրաստ է: Բացուածքը՝ ուրկէ զուրս ելաւ, այնքան նեղ ու պզտիկ էր, որ է՛ն ահաբիւ հանգամանքները միայն կրնային ստիպել ո և է մէկը մտնել ատկէ: Շուտով հետեւեցայ իրեն, և կրկին, ինչպէս ըսի, քարայրին առջեւ քառակուսի տափարակին վրայ կանգնեցայ: Անմիջապէս սկսանք իջնել: Այսուամենայնիւ, էջքը շատ

աւելի դժուար էր քան վերելքը. նոյն իսկ հարուն օգնութեամբ, եթէ իր հնարած գիւղը ի գործ չը դնէր, որ, ինչպէս ըսաւ, Միքէին ալ շատ դիւրութիւն մատուցած էր: Այս գիւղը տեղային անպէտ խոտերով լեցուած պարկ մ'էր, իւրաքանչիւր ծայրէն երկու զօրաւոր շուաններով: Պատուիրեց այդ պարկին վրայ նստիլ ու պարանր պի՛նդ բռնել: Ապա, իրատելով որ չը վախնամ, պատեխին վրայէն վար հրեց քայն: Երկրորդ խոշոր քարակոյտի մը վրայ հանգչեցանք, մինչև որ ինթրովամ տակաւին պարանէն բռնած՝ վար մօտս մագլեցաւ: Ես ու պարկը յաջորդաբար քարէ քար վար կը քշուէինք միեւնոյն ձեւով, մինչև որ ստորտը հասանք: Էջքը խիստ արագութեամբ կատարուած էր. վասնզի, հազիւ ուր ըլլալուս զիտակից արդէն Սիւլէյմանի գիրկն էի՝ ու շնչասպառ: Մինչև շունչիս վերստացումը՝ ձեռքս իրենին մէջ հանգչեցուցի, ապա, հայր իր պատուէրները առնելով՝ նորէն վեր շուրուելի սկսաւ: Անոր անբերեցողութեան վերջ Սիւլէյման, ժպիտով մը, որ նոյն իսկ լուսնեակին տարտամ լոյսն իսկ անկարող էր ծածկել, ըսաւ.—«Եկուր, սիրելիս»—ու երկրորդ անգամ լլալով՝ վերցուց ու դրաւ զիտ, —«՛չ,

այս անգամ թամփին վրայ չէր, այլ ետեւը պատրաստուած գտակի մը վրայ, միևնոյն ժամանակ ըսելով.—«Կը տեսնես, Դէֆիս, հիմա հարկ չկայ մարդոցմովս հուրիսս հետ մէկտեղ քովէք քալել, ու որքան որ շուտ ձեղքենք այս բացատանը այնքան լաւագոյն է»: Սիրտ զուարթ էի. միայն Սիւլէյմանի հետ ըլլալուս արդէն բաւական էր ինձ համար: Ապա խընամքով նստատեղիս շտկեց ու տեսնելով որ կապերը ամուր են, համե, տին վրայ ցատկեց:

Բաժնուած էինք Չնայելով դիշերային գեղեցկութեան, լուսինը, թէ և անթիւրի անկարող կերեւէր ամանակագրի որուան լոյսը վտարելու, ու վերջապէս տակաւին կը գեղեցիկ արևմտեան երկնակամարին վրայ, որուն մէջ քանի մը անտղեր միայն կը պղպղային՝ կարծես լուս աւերեւոյթանալու համար: Անսովոր թախծութիւն մը ծանրացաւ սրտերնուս վրայ, և բոլոր ժամանակը, որ զգուցութեամբ և հանդարտօրէն կը հետեւէինք լեռներուն ստորտուր բորրուող անկանոն ու խորտուրբու ճամբաներուն, բառ մը անգամ չը փոխանակուեցաւ մեր մէջ: Բաւական մղոններ ձեղքելով անցք մը, արծաթագոծուած շօճիներու և երեսուսի նման սեւ, նեղաւոր հովանքներու

լայ գերագոյն օրէնքը մեր հասարակական գործունէութեան մէջ :

Կոռուիլ եւ միայ կոռուիլ կազմակերպուած ու զոհողութիւններ ընելու աստիճան պատրաստականութեամբ՝ ահա միակ ապահով խարխուղ փրկութեան :

Այս մի քանի ընդհանուր մտքերը այստեղ յայտնելէ վերջ յայտնող մենք կանցնինք Վառնայի գաղտնիքներուն՝ ներկային եւ մտակայանցեալին վրայ մասնաւորեցող խընդիւրը :

Սեպտեմբեր 13 սեպտ. 1905

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆՍՄԱԿՆԵՐԸ

— 0 —

«Ռուս» թերթը թիւ 215 ի մէջ «Նա Քաղաքացի» ընդհանուր խորագիրը կը բողբ քաժնուած գետեղի է երկու ուսանողների նամակներ. առաջինը՝ հայ ուսանողի նամակն է Դ. Տէր-Սիւեան ստորագրութեամբ, երկրորդը մուսուլման ուսանող ստորագրութեամբ :

Հայ ուսանողը գրում է. «Երբ մենք դեռ գիմնազիւնումն չէինք սովորում իրօքայնու ճշմարտութիւնը պատմութեան գաղափարի վրայ, մեզ ասում էին, որ ուսուցիչը մեծահոգի բարի ժողովուրդ է, որ նա խեղճ քրիստոնէականներին ազատելու համար պատերազմել է շարունակ տաճիկների հետ, որ նա Վրաստանը առաւ իր հովանաւորութեան տակ, որովհետեւ պարսիկները տանջում էին քրիստոնէայ վրացիներին, Ուր մնացին մեծ ուսուցիչի մեծ զգացմունքները. Այդպէս նամակի հեղինակը խիստ լեզուով դատապարտում է ուսուցիչը եւ հասարակութիւնը նրանց ցոյց տուած անհամբուրութեան համար դէպի տանջուող եւ թուրքերի ձեռքով կոտորուող Անգրիկոսի հայ ժողովուրդը ձիւղ է, ուսուցիչի մի մի քանի օրգաններ նուիրում են յօղուածներ կովկասեան արքային :

Իրեն բայց ինչպէս. նրանք հաշուում են վառուած նախ թիւ քանակը, արդիւնազորութեան միասնեցումը. բայց կարծես, նրանք անուշադիր են մարդկային անթիւ գոհերի նկատմամբ. սպանուողների տղաղակները չեն հասնում նրանց ակնջին, իր նամակի վերջում հեղինակը դիմում է ուսուցիչին եւ հասարակութեանն այս խօսքերով. «Թող ուսուցիչը հասարակութիւնը եւ մտաւոր պատասխանեն. ուր մնաց նրանց մեծանոցութիւնը նրանց սէրը դէպի մերձաւորները ուր մեծ ուսուցիչի պատրաստականութիւնը օգնութեան գալու տաւապալներին եւ ճնշուածներին; Ինչքան չէիք, որ հայկական կոտորածների ժամանակ Տաճիկաստանում վերջուրում էիք, պահանջում էիք անպաշտպանների պաշտպանութիւնը, ինչու էք այժմ լուր 25-ը որ տաճիկական գաղտնիքները այժմ անկողնուն ոչ այնտեղ Տաճիկաստանում, այլ ձեր աչքերի առջ կովկասում՝ ուսուցիչի թանկարժէքին աղամանդի վրայ» :

Թուրք ուսանողի նամակը այս խորագիրն է կրում. «Բայ նամակի Բագուի մուսուլմաններին» :

Սոսկի թուրքում սպանուած «Պագու» աշխատակից Ջանգիր աղա Շահթախախնու մասին եւ չէր մտողը նուիրելով նրան, հեղինակը ողբում է լաւ, մահանդակներին իրական բարեկամի ողբերգական մահը. «Հէնց Բագուում հաստատուելուց յետոյ խիտն նա ճիշտ կերպով գնահատեց յայտնի կուսակցութիւնը. որի պարագլուխները Աղայիվ, Թոփչիբաշեւ եւ ընկ, մահանդակներին իրաւունքների այդ պաշտպաններն են հանգրիւնում իրանց. զբարեգործ եւ առաջինի կապիտալիստներին հետաձուգուցեալ թուրք լրագրողը ճշմարտութիւնն ասում էր այդ թուրք ջոկերի երեսն ի վեր, նոյնն էր անում եւ նորս մեծ եղբայր՝ Մահալէզ աղան «Շեքարթ-Ռուս» թուրք թերթի խմբագիրը. որ չկարողացաւ մաքառել ճշգր Աղանի վերի եւ Թոփչիբաշեւների

կուսակցութեան դէմ եւ դադարեցրեց իր թերթը առժամանակ որոհեալութեամբ այդ շարքի մեջ «Շարքի-Ռուս» թերթը ազիտատորները—Աղայիվ եւ ընկ. մինչեւ անգամ հանգուցեալ Ջանգիր աղա Շահթախախնու միանուագ մի գումար էին առաջարկել որ նա թողնէ Բագուն եւ հեռանայ բայց նա կաշառուող մարդ չէր. այլ պայքարող եւ նա հակառակ կը զոր թուրք կուսակցութեան կամքին մնաց Բագուում կուսակցութեամբ ֆանատիկոս գրողների եւ կատաղի պահիւստիստ ազիտատորների դէմ, որոնք ստեղծեցին կովկասեան բոլոր արքայները, հայ-թուրքական կոտորածները եւ բոլոր աղէտները. Թուրք ուսանողն ազիւ աւիւնով յարձակում է խաւարի այդ դաւակների վրայ եւ մերկացնում նրանց բոլոր ստոր եւ հակառակորդային գործերը եւ արարքները :

Բայց կը լսեն արդեօք, թուրքերը այդ կոչը, Ջանք հաւատում :

ՊԱՐՇԱՆՈՅԱ

ՊԱՐՇԱՆՈՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆՍՄԱԿՆԵՐԸ

— 0 —

(Լը Քուրիէ Էօրօպէէն)

(Շար. Ասիայի քիւնէն եւ վերջ)

Որչափ ալ որ մեծ բլրայ հայերուն կորուսար, ես համոզուած եմ թէ այդ ժողովուրդը չը պիտի կորուսուի. Ան հազարաւոր տարիներու մէջ պահպանած է իր գոյութիւնը, հետեւած իր քաղաքակրթիչ դերին եւ թարգմանութեամբ մը ստատիքի պատահարներու : Դարերու ընթացքին մէջ հայը եւ իր կայ եղած է այս թաթարներուն նախահայրերու յարձակմանց, որոնք այսօր գայն կուգին ջնջել, ինչպէս եւ շատ մը ուրիշ ցեղերու ուրոնք այսօր գոյութիւն չունին : Հայը յարատեւած է, անդրդուելի իր ինքնավստահութեան մէջ, հաւատա-

աակէն, յանկարծ լացաստանի մը մէջ ելանք : Ուր խուրձան ճիշ մը արձակեցի, Հոն, ճիշդ դէմս. լուսնին արծաթափայլ լոյսին ներքեւ, խաղաղ զիւր թունով հանգչած էին հայրենի թաղաքս եւ հօրս ապարանքը. իր դիրքու ցան աւերակները, կոտորած յետարանները, վրուզուն բերդը ու խարխուղ պարիսպները, որոնք աղօս կերպով արծաթագոծուած էին միւսնոյն լոյսով : Սակայն, ցնորքներով զմայելու ժամանակ չունեցայ, որովհետեւ, իմ ցնոթութեան աղաղակիս հետ՝ գրեթէ միաժամանակ զարձանքի եւ սարսափի ճիշ մ'ալ արձակուեցաւ Սիւլէյմանի կողմէ :

— Ո՛հ, Դէֆիս, գոչեց, ետին դառնալով ու արեւմուտքը ինձ ցոյց տալով, որ հիմա աղօտ լոյսով մը կը շողար, եւ որուն արտացոլացումները, բոցերու դողողուն վէպէտներով չըջակայքը մղոններ շառագունած էին :

— Ի՞նչ է այդ, Սիւլէյման, հարցուցի, անշուշտ վերջալոյսի ժամը շատոնց անցած է :  
— Վերջալոյս, սիրելիս, գոչեց ան, ատի ընդհանուր հրկիզութեան մը բոցերն են : Զիտաները մեզմէ առաջ հասեր են : Գիտէինք թէ այդ քաղաքը վտանգի տակ էր, ու թէ որ քանի մը օր վերջը պատահէր, ձեր, կին, երեսայ ազատուած կըլ-

լային, որովհետեւ մեր նախազգուշութեան լուրը ստացած՝ լեռները փախելու վրայ էին : Ապահովելով զանոնք, տղամարդիկը որոշած էին քաղաքը մնալ կրակի տաղի՛ն յարձակման նշանը տեսնելուն, սուր ի ձեռին թշնամուծ վրայ խուժել, ու կամ ետ մղել զանոնք եւ կամ, մեռնիլ... Ատի, Դէֆիս, պիտի ըլլար այնպիսի մահ մը, որով իրենց քաջ նախնիքները մեռած էին, երբ տակալին զարեբու լուծը իրենց մէջ անական ողին չէր խորտակած : Ահա սո՛ս, փոսո՛ս, Ջէյրու թն է այդ՝ բոցերու մէջ : Սողոսողութեանն ու հալածանքները դադարած են. դիւային գործը կատարուած է, գոհներ խաղաղութեամբ կը հանգչին... ատիկա իրենց թաղման վառելիքայն է :

Պահ մը գլուխը պատկառանքով կուրծքին վրայ բարձրացնելով հեկեկաց, — Ո՛հ, Աստուած, մինչեւ ե՞րբ : Ապա, վեր բարձրացնելով զայն — արայց... բայց... գոչեց, անը մը գաւաճանութիւն մը կատարուած է Դաւաճանութիւն. զգոյցի է՛ն մոռթ խորքերը գարնունու, է՛ն ազդու գէնքը... Այնպիսի փրկիչը պիտի խաչուի : Այն ատեն դժոխքի Յուզան պատրաստ է, Հայրենասէրները պիտի մեռնին : — ուրիշ գաւաճան մը պատրաստ է... :

Ես ալ անկարող զգացումներս զբուզելու, կը հեծկտայի. — Ո՛հ, Սիւլէյման, հարցուցի, բոլորն ալ ջարդուած... խողիտուած են... »

— Բոլորն ալ... բոլորն ալ... պատասխանեց ան, Ո՛հ, Դէֆիս, մեռնողներուն համար մի՛ լար, իրենց զմեզակ դատաստանը վերջ գտաւ, ուրախացի՛ր անո՛նց համար. անոնք մեծ փորձութեանն ապահեցան. հրճուէ՛ ա՛ն ո՛նց համար, բայց, ո՛հ Դէֆիս, լա՛յ ապրողներուն — քոյրերուդ համար, որոնք նոյն իսկ այս պահուս մոլեգնած գիւնուորներու ճիրաններուն մէջ կը գտնուէին : Ո՛հ, լա՛յց ան ո՛նց համար — եւ կրկին գլուխը կուրծքին վրայ կախուեցաւ, որպէս թէ մահաշունչ օրհասի մը մէջ գրտնուէր : Ես ալ նոյնպէս գլուխ խոնարհեցնելով՝ ջերմեռանդօրէն աղօթել սկսայ :

— Ո՛վ մեր հայրերուն Աստուածը, փրկէ զժաղդ քոյրերս այդ հրաշունչ հնոցէն եւ քովդ ա՛ն գանձը :

— Ամէն, ամէն, կրկինց Սիւլէյման, ու ըսաւ... — Սիրելիս, երկուսուր ու երկուսուր Աստուած մէն շնորհակալ եմ քու ապահովութեանդ համար : Հիմա ժամանակը կանցնի. ջանանք մոռնալ այդ տօթուած լոյսէն ազդուած զարհուրելի գաղափարները, ու դարձեալ երկինքը ցոյց տուաւ : —

Իմ իր արեւմտեան քաղաքակրթութեան յառաջապահի դերին արեւելքի մէջ : Ու ան պիտի յարատեւէ հակառակ ամենուն : Իր ճակատագիրն ողբերգական մեծութիւն մ'է :

Այսօր հայը կը տանջուի անգամ մը եւս ազնիւ գատի մը համար որուն ինք գոհաբերուած է ամեն ժամանակ : յղապատուած Փանաթիք, տղէտ, թշնամի, գող եւ բռնարարող տարրերով. ան միշտ միջոց գրտած է աշխատելու անընդհատ արգիւնարեբելու, միշտ պահանջելով ազատ եւ իրօք քաղաքակրթ ու ճիւղ մը ամբողջ արեւելքում :

Արիւնը որ հայերը կը թափեն հեղեղով պիտի վերածնէ Արեւելքը եւ այս թաթարներուն թոնձիրը իրենք օր մը պիտի օրհնեն հայերուն յիշատակը : Դորոնք այսօր կրնան, որոնց արիւնը ուշ թէ կանուխ այս դժբաղդութիւններու փոխան պիտի ստեղծէ տիրապետութիւնը օգտաւէտ ազատութեան բոլոր ցեղերուն համար :

Այս սիրուն երազը ե՞րբ պիտի իրագործուի, ես բան մը չեմ գիտեր. Ես միայն գիտեմ որ այդ պատմական անհրաժեշտութիւն մըն է եւ պիտի կատարուի : Մարդկութիւնը աշխուստ կրբեմնիներ չէ, գտտ-գտտ, առանձնացած խմբերով ապրող, որոնց իրար մերձեցումը տեղի կուենար միայն զիրար սրախողիտուելու համար : Այսօր աշխարհիս ամէն մէկ կտորը կը հետաքրքրուի ամբողջ մարդկութեամբ : Հիւսիսին անցքերը կանդրազառնան հարաւի մէջ :

Այն ինչ որ այսօր գոյութիւն ունի արեւմուտքում արժանի ներուպայի անուան այդ բանին Սիւլայիք մտքին համաձայն դատարարուած — պիտի վերջացնէ, վստահօրէն. աւելի շուտ քան կը կարծուի, մաքրելով բարձրաստիճանային օճախները որոնք յարստեւ ամօթ եւ վրտանգ են մարդկութեան համար : Միակ լուրջ արգիւքը որ գոյութիւն ունի անմիջականապէս այդ անհրաժեշտութիւնը իրականացնելու համար, Գերմանիոյ դիրքն է, սակայն

«Նստուածքը կրնա՞ս պահել, սիրականս եթէ քիչ մը աւելի արագ երթանք» :

— Կը ջանամ, կարծեմ թէ կրնամ : Ու փորձեցի ժպտիլ երեսին, որ լուսնկային լոյսին տակ բոլորովին դալկացած էր : Ջանացի ժպտիլ, ոսկայն ժպտող չեկաւ : Սիւլէյման թեւակալ մը անցուց մէջքիս ու ամուր կերպով գօտիին կապեց : Ապա, Հուրիին սանձը բաց թողով՝ հարձակային վրային կը սուրայինք. նմոյքին շարժումները այնքան մեղմ ու արագ էին, որ կարծես թէ օդաւայց կը թռչէի :

Հօրս ապարանքէն քանի մը հարիւր կանգուն հեռաւորութեան վրայ կանգ առինք ու ապա նախապէս որոշուած նշանը — փայլուն սասաղը Սիւլէյմանի կողմէ հրթիռով մը դէպի օդը արձակուեցաւ :

Ամբողջ տասը վայրկեան սպասեցինք ինչպէս կարգադրուած էր, ու յետոյ կամաց կամաց յառաջացանք : Թանկարծ կանգ առաւ ան :

(Շարունակելի)

անկարելի է մտածել թէ որ այս Պէթիսովէն Գեօթէն Երկրէր Ժնոզ մեծ երկիրը շարունակէ պահպանել զէպի Արեւելքի բնիկները պաղօրէն շարչիական շահագործող գիրքը:

Եթէ Ռուսիան չընտապէ վերագոռնալ իր աւանդական գերին, եթէ նա յամառի երկրորդել Ապտուլ Համիտին զործը եւ պիտի օրինակէ համիտական ուժիմը անոր ալ կըսպասէ նոյն վիճակը ինչ որ վիճակուած է, այս դարու պարտուած ուժիմին: Գազապիլիթ աշխարհը Ռուսիան պիտի ընդունի իբր երկրորդ Թուրքիա եւ զայն պիտի բռնադատէ ազատական ուժիմ մը ստեղծել, երբ ինք ինքն-իրեն չընէ այդ:

Արշակ Չորակնան

ՎԵՐՁԻՆ ՏԵՆԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ Ո Վ Կ Ա Ս

Ոստիկանական տեսուչ գեներալ Երիւնկինը տեղեկագրել է ներքին գործերի նախարարութեան, որ Բագուում սեպտ. 15ից սկսած մինչեւ ութմ թէ՛ քաղաքում, թէ՛ շրջակայքում և թէ՛ հանքերում՝ ամեն ինչ խաղաղ է թուրքերն ու հայերը ազատ շրջում են քաղաքի բոլոր մասերում: Տրամադրութիւնը բարեյակով է:

Պահապանի մէջ տպուած է Մօգեստովի մի յօդուածը, որ մատնանիչ է անում կովկասեան գործերի լուրջ գրութիւնը և առաջարկում է օտար ցեղերի (հայ, թուրք, վրացի) ձեռքով կառավարութեան մի նոր սխտեմ գործադրել այնտեղ:

Պաշտպանի մէջ ամենեւին պետական իրաւունքներին, որոնք պիտի պահպանուեն ու յարգուեն պետութեան բոլոր կողմերում՝ մենք պիտի բարեհայեցող լինենք երկրի ազգաբնակչութեան բոլոր ցեղերի վերաբերութեամբ: Ռուս միապետական իշխանութիւնը պիտի յայտարարէ այդ զանազան ազգութիւններին՝ հետեւեալը:

«Ահա, մինչեւ այստեղ է ձեր իրաւասութիւնը, որով դուք կարող էք զարգացնել ձեր ազգային ինքնուրոյնութիւնը: Գրանից յետոյ սկսում են ընդհանուր պետական շահերը, որոնք անխտիր, ամենքի համար պիտի համարուին նուիրական»:

Գանձակի մեր թղթակիցը գրում է 15 սեպտեմբերի:

Այս րոպէին լուր հասու, որ թուրքերը յարձակուել են և Խաչակապ գիւղի հասարակութեան տաւարն ու ձիաները տարել: Երբ աւարը հասնում է Մարուկապ կոչուող սեղը, այդտեղ նրանց առաջը կտրում են Չոզգառ գիւղի պահապանները, ո-

րոնք թոյլ չեն տալիս աւարը տանելու: Մի մասը խլում են, միւս մասը (ձիաները) թուրքերը թէև ասում են՝ իրենցն է, սակայն հայերը չեն հաւատում, մարդ են զրկում մօտակայ հայ Խաչակապ գիւղը, որտեղից գիւղացիք գալիս են և իրենց ապրանքները տանում: Հայերը անախորժու թիւններ տեղիք չտալու համար շխտաւում են ապրանքները յետ խել առանց թուրքերի հետ ընդհարուելու:

Բագուի գիմնազիայի 8 դասարանի աշակերտները ծնողները, Բագուում տիրող տագնապից վիճակի պատճառով, դիմել են կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուին խնդրելով այդ աշակերտներին փոխադրել Վրացիկավկազ, Այդ խնդրի առթիւ հոգաբարձուն գիմն է հարցով Վրացիկավկազի գիմնազիայի վերատեսչին: Թիֆլիզի գիմնազիաներում կը զետեղուեն 70 Բագուցի աշակերտներ:

ԴՍՐՁԵԱԼ ԼԱՐՈՒԱԾ ԴՈՒՄԻՒՆ ԳԻՐԳԱՄԻՐ, 13 սեպտ.

Ի՞նչ տեսակ լուրեր ասէք, որ չեն պտտում մեզանում և մէկը միւսին հաղորդում վրագիրներով, երբեմն էլ ականջներում փսփսում:

Երէկ լուր տարածուեց, թէ 400 500 թուրք ձիաւորներ սպառազինուած գնում են դէպի Շամախի: այդ լուրը մինչեւ կէսօր արդէն հասաւ 800ի և վերջապէս եկուորներից մէկ հայ, որից կարելի էր ճիշտ տեղեկութիւն ստանալ՝ պատմեց, որ մի օր առաջ (եկուորը Մատրասայ գիւղից էր, որը 7 վերստ հեռաւորութեան վրայ է գտնուում Շամախուց) լուր է տարածուել Մատրասա և շրջակայ գիւղերը, որ հարիւրաւոր զինուած ձիաւոր թուրքեր են գալիս աւերելու և ինչպէս որ հայ գիւղերը: Բաւոր մանր գիւղերից, որոնք մօտ են Մատրասայ՝ ընտանիքները բերում են այդտեղ, իսկ տղամարդիկ գընում են գիւղերը պահպանելու:

Այս եկուորը միայն այսչափ տեղեկութիւն տուեց այդ տեղեկեցիող լուրի մասին, աւելացնելով, որ գալու ժամանակ, երբ Ախուէի շէնքը (զա գտնուում է Շամախու և Գիւրգամիրի համարեա կէս ճանապարհին և ունի պոստի կայարան) այդտեղ պատմել են իրեն, որ իսկապէս մօտ 200 ձիաւոր թուրքեր են եկել Ախու և շրջակայ թուրք գիւղորայքը մարդ են ուղարկել, որ գան միանան իրենց հետ և արշաւեն հայերի վրայ: Թէ այդտեղի և թէ միւս թուրք գիւղորայքի բնակիչները մերժել են օգնելու և

նոյն իսկ պահանջել են, որ իրենց դաւառից հեռանան և իրենց անունը չարատարեն:

Այս տեղեկութիւնները մինչեւ երեկոյ հաստատեցին և տեղացի թուրք զորավարները, որոնք մեզ ասին, թէ Գիւրգամիր էլ են մարդ ուղարկել այդ եկուոր թուրքերը և օգնութիւն խնդրել, բայց մերժում են ստացել: Այդ եկուոր թուրքերը թուով եղել են 200 հոգի՝ պատրաստ և զինուած թուրքեր, որոնք կարծեօք Արաքսի տփերի բնակիչներ են:

Չնայած որ ո՛չ մի յարձակում չի եղել և հայերին Շամախու գաւառում դեռ եւս վստասած չէ թուրք խուժանը, բայց քրուութիւնը խիստ լարուած է և մարդ կարծես մի բանի սպասում է՝ ահա եթէ ոչ այսօր, վաղը կը յարձակուեն, մեզ սրի կը քաշեն և հայերի ունեցած շուկեցածը կը թալանեն և կը տանեն:

Թուրքական շարժումները արթնացրին երբեմն խաղաղ բնակիչների ինստիկտները և խրատուած կովկասի այս խառն գրութիւնից, այժմ սարսափելի չափեր է ստացել աւազակութիւնը մեզանում: (Արշալոյս)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանի մը մը օրէն պուկար էք զարքը Սօֆիայէն Ծիլիպէ հանդիպելով պիտի մեկնի Պօլիս:

— Իշխանը մեկնէր է Փրանսա նախագահ Լուպէի պաշտօնական այցելութիւն տալու համար:

— Պէլքիքաչան թերթերը համակրական յօդուածներ կը տպագրեն Պուկարիոյ մասին և անոր արագ յառաջադիմութիւնը կը մատնանչեն կարճ ճամանակուան ընթացքին մէջ:

— Կիմանանք թէ՛ մեր աղագակիցներէն և Սօֆիայի յայտնի բժիշկներէն Տօքթօր ԹԱԳԻՈՒՆՆԱՆ հոկտեմբեր ամսոյ սկիզբը պիտի մեկնի Պէլքին և Փարիզ, ուր պիտի մնայ երկու ամսոյ շափ: Սոյն հայ ժրգան բժիշկը յիշեալ քաղաքներու համալսարաններուն հոշակաւոր բրօֆէսօրներու հիւանդանոցները պիտի շարունակէ բժշկական արհեստին ամենավերջին կատարելագործութիւնները և գիւտերը ուսումնասիրելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսոյ մէջ, ըստ եկած տեղեկութիւններու, ամեն օր ռումբ և ական կը գտնան և այդ պատճառով բազմաթիւ հայեր կը ձերբակալուին: Բանտերը լիքն են

հայելով: Եւրոպացիներուն առաջարկուած է հայ ծառաները պահել: Հայերը մեծ տանջանքներու ենթակայ են բանտերուն մէջ: Պատրիարքը կառավարութեան պահանջած է որ իշխանութիւնները մատնանչեն որոշ կերպով այն հայերուն անունները որոնց քով իբր թէ ռումբեր գտնուած են: Թուրք մամուլը անուանակ լեզու մը կը գործածէ դէպի հայերը, կարծես թէ թուրք ամբօխը կոտորածի մղելու համար: Եւրոպական դեսպանները կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրած են այդ երեւոյթին վրայ և առաջարկած սանձահարել թուրք մամուլը:

Թ Ո Ւ Ս Ի Ա

«Ռուս» թերթը կը հաղորդէ որ եթէ Ռուսիոյ համաձայնի նախարարապետութեան պաշտօնը ստանձնել, ինք նախարարական մասնաւոր պաշտօն մը չը պիտի առնէ որպէս զի կարենայ ամբողջ կառավարութեան վրայ հսկել:

— Մոսկուայի մէջ հացագործները գործադուլ ըրեր են ցոյցեր ընելով: Խաղախները միջամտած են կարգը վերահաստատելու համար, թէ ցուցարարներուն և թէ խաղախներուն կողմէն մարդիկ կան սպաննուած և վիրաւորուած:

— Ռուս ազատական մամուլը կը պահանջէ որ կովկասի բնակիչներուն լայն իրաւունքներ տրուին իրենց ներքին գործերը կառավարելու համար:

Ի Տ Ա Լ Ի Ա

Թագաւորը երկրաշարժէն վնասուածներուն այցելութիւն տալէ յետոյ գացեր է Միլանօ հասարակապետականներու և գործաւորներու կենդրոնը: Այցելելով գործարանները և գործաւորներու թաղերը անձամբ մանրամասն տեղեկութիւն հաւաքեր է անոնց վիճակի մասին: Իր այդ բարի և պարզ վարմունքին պատճառով մեծ համակրութեան արժանացեր է ամբողջ ժողովրդի կողմէն, ի թիւս որոց և ընկերավարականներու:

— Գալապրիոյ մէջ քանի տեղերը երկրաշարժի նոր ցնցումներ տեղի ունեցեր էն: Գանի մը տուններ քանդուած են կրկին և այդ պատճառով ժողովուրդը մեծ սարսափի մէջ է: